

Բ Ա Ն Ա Ս Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ. ԱՆՀԵ-
ՌԵՏԵՍ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ.

Հայ ազգը ուսում սիրող և յարգող
ազգ է եղել և է: Աորա անցեալին փոքր
ի շատէ ծանօթ Հայը կարող է ապաքէն
յիշել թէ երբորդ դարից սկսեալ մերբազ-
մարդիւն թարգմանիչք և նոցա յիտազայ
սերունդը որպիսի եռանդով և ճշմարիտ
ուսման սիրով՝ երամ երամ դիմում էին
դէպի ժամանակակից լուսաւորեալ մայ-
րաքաղաքները ուսումն առնելու նպատա-
կով: Վանի, Դանի արժանայիշատակ մա-
տենագիրներ ունինք քրիստոնէութեան
սկզբնաւորութիւնից մինչև վերջին դարե-
րը, որոնք մեծ ճիգն ունեցողութիւն յանձն
առած յանուն ճշմարիտ ուսման և վար-
դապետութեան՝ իրանց անունը անմահա-
ցրել են Հայաստանեայց եկեղեցւոյ տօնե-
լի սրբոց շարքում, որով և արմատացրել
են հեազհետէ Հայի մեջ ուսումնասիրու-
թեան գովելի ձգտումն ունասանք: Ուս-
ման սէրն արդարև Հայի առաջին շարժա-
ռիթն է եղել դէպ ի լուսաւորութեան
առաջնորդը և մեծամեծ օգուտների է տի-
րացրել նրան: Այս սիրոյ արդիւնքն է ա-
հաւասիկ որ այժմու արեւմտեան լուսաւո-
րեալ ազգերը Հայոց ազգն համարում են
առաջին արեւելեան ազգ, որ իւր բարձր
և վսեմ կոչումը տակաւին կատարած է
աշխարհիս երեսին:

Բայց պէտք է խոստովանել որ միւսնայն
ժամանակ ուսման սէրը, կամ աւ ևս ա-

սել, այդ սիրոյ անխտիր յագեցնելը երբեմն
մեծամեծ փրասներ է հասցրել մեր ազգին՝
որովհետև փոխանակ հարազատ ազգու-
թեան և կրօնի վիմի վերայ -- ժողովրդա-
կան թարմ և պարարտ ոյժերով հիմնո-
ւած սեփական ուսումնարաններ ունենա-
լու, Հայն դիմում էր օտարի դիրկը, սպա-
րաստ էր ընդունել ամեն ազգից և ամեն
դաւանութիւնից ևս ուսման գանձը: Այն
ինչ այժմու երեւելի ազգերի անընդհատ
գոյութիւնը ոչ ապաքէն իրանց մայրենի
եկեղեցւոյ և աւանդութեանց վերայ հիմ-
նուած ուսումնարաններով է հաստատ-
վում և զարգանում, թողնե՛նք տակա-
ւին մեր տարագրեալ ազգը -- ահաւասիկ
ուրիշ ազգեր գովելի յառաջադիմութեամբ
ձգտում են ամրացնել իրանց ազգային
գոյութեան խորիսկը կրօնի և մայրենի ե-
կեղեցւոյ վիմի վրայ: “Общественное
воспитание въ Рессіи“ (հասարակա-
կան կրթութիւն Ռուսիայում) անունով
գրքի հեղինակը՝ բաղդատելով Անգղեայի
նախանձելի ուսումնարաններն Ռուսաց
ուսումնարանների հետ, և ի թիւս այլոց
այժմու բարձր, միջին և այլ առանձին ու-
սումնական ուղղութիւնն աչքի առնելով
Ռուսիայի բազմամարդ և զօրեղ տէրու-
թեան ոյժի համեմատութեամբ՝ բոլոր իր
հետադատութիւնքը և դիտողութիւնքը
հետեւեալ խորհրդածութեամբ է կնքում.
“Ուրեմն, ասում է, Ռուսական ուսումն
,,նարանը գլխաւորապէս պէտք է ամրանայ
,,ուղղափառ եկեղեցւոյ հիմանց վերայ,
,,նորա ժողովրդի բնածին և վսեմ ճշգտ-
,,մանց և թելադրութեան վերայ, ուսումն
,,նարանական բաղկացութիւնը իր լրումը
,,պէտք է գանի եկեղեցական գերագոյն

Վերին մասերից: Այս շաղկապը (ուսումնարանի և եկեղեցւոյ միջ) մէկ կողմից աւելի բարձր կգատէ՝ ուղղափառ եկեղեցւոյ նշանակութիւնը, աւելի շոշափելի (անհրաժեշտ) գործունեաց կձևացնէ հասարակաց օգտի համար մեր եկեղեցւոյ մէջ, կրթութեան սրան իրաւ և մարդկութեան աչքի առաջ: միւս կողմից այդ շաղկապով մեր ուսումնարանը աւելի սրբաւայր տեղի կգտանայ և կունենայ աւելի ազգային նշանակութիւն: (197 երես): Այս խոսքերը, որ ուսանական ուսումնարանի համար է գրել յիշեալ զըրբի հեղինակը, ոչ միայն շատ հաւանական են և ընդունելի, այլ և միանգամայն ստոյգ և իրադործելի են առ հասարակ, մանաւանդ Հայկական կեանքի վերաբերութեամբ, ինչպէս փորձով երևում է այդ Անդրկիսցւոյ և Վերամանացւոյ ուսումնարանների ընթացքում: Բայ ի քաղաքական միութիւնը՝ այդ սղիւրը ունին և ժողովրդական համազգային միութիւն իրանց սեփական միաշաղկապով կրթութեամբ, որն իսկապէս ազգային է ժողովրդական աւանդապահ և ծաղկեալ դպրոցների ուղղութեամբ կեանքի հետ կախուած տիրացած: Ահա ի մանրատառում նկարագրութիւն անել նոյա դպրոցների պատմական կեանքի, ընթացքի, և ոյժմու արդիւնաւորութեան նկատմամբ, բաւական է տեսնել որ այդ հոշախաւոր ազգերն ևս մեզ նման դարեր ապրելով (թէպէտ ոչ մեզի չափ)՝ իրանց հարազատ անկողոպտելի ոյժ բով, իրանց մայրենի լեզուով, կրօնի և աւանդութեանց վերայ հաստատուած դպրոցներով ու կրթութեամբ ոչ միայն վաղեւեակայ կարգից առաջակարգ քաղաքակր-

թեալ լուսաւոր ազգերից ընտիրներն են հանդիսւնում սշխարհիս երեսին, այլ և հոգեկան զարգացման և վսեմ բարոյականութեան միջ կրելով՝ իւրեանց ապագայն ևս ապահովցրած են և ներկայիս հակադրալ յառաջագիժութեամբ աւելի վսեմ և անգին օգուտ երեն մատակարարում ընդհանուր մարդկութեանը: Իսկ Հայ ազգը այդպէս չէ ապրել. նորա աչքը միշտ օտարին էր նայում, ոչ թէ անընդունակութիւնից կամ հոգեկան ոյժերի պակասութիւնից ստիպուած, այլ մի առանձին անհեռաւ և բոլորովին վնասակար օտարասիրութիւնից թելադրուած: Աս պատկուծէր այն, նորա ուսումնարանի տնայնիւ ծառաւ շարժում էր նրան մի աղբիւր որոնելու, բայց նորա մէջ զգուշութիւն չէ տեսնուում այդ աղբիւրը ընտրելու ժամանակ: Աւանան գինը նա գիտէ արդարեւ, բայց նա ուրիշ կերպ է ներկայացնում նորա նշանակութիւնը: Աւսուցիչ լուր բան է տեսում է պարզամիտ և անուսումն Հայը, ուսուցիչ մարդուս աչքը կեանայ, մարդուս լուր պատուի ու անուան կտիրացնէ — ուսուցիչ շատ լուր բան է, այսքանը նա որպէս և իցէ գիտէ, միայն (ինչպէս վերը յիշեցինք) նա չգիտէ ջոկել և ընտրել դորա ձեւը բերելու միջոցները: Արտեղ ինչ ուսումնարան է բացուում — ի՞նչ ազգի և ինչ կրօնի կլինի լինի — առաջին մանողը Հայն է եղել: Այս ցոյց է տալիս որ Հայը թէև ուսումնասէր է՝ բայց անհեռաւ է, որովհետեւ նա ամենայն յօժարութեամբ դիմել է անխտիր օտար ուսումնարաններ և կրթէք չէ մտածել որ այդպիսով իրազգութեանը կամ կրօնին կվնասէ: Ի՞նչ

այիտի անեն, ստում է միամիտ, բայց միևնոյն ժամանակ ուսումի վսեմութեան մըտքով յափշտակուած Հայը, մի՞թէ՝ ստում է, կարելի է, խլել այն՝ ինչ որ մի բընական ա՛ն կողոպտելի և սուրբ ստացուածք է: Միայն ի հարկէ նա մտածում է յառկապէս իր անձի վերաբերութեամբ, և իւր չափով է չափում առանց կշռելու իր որդւոց վիճակը՝ որոնք պէտք է միանգամայն տալեր և օտար պայմանների տակ մեծանային և զստախարակուէին. նա և առանց մտածելու որ թէպէտ իրան ոչինչ չեն աւնում և չեն էլ կարող անել, բայց իր որդիքը արդէն կամայ ակամայ ընկճուում են օտարի ոյժին և անհետանում են իրանց հարազատ ազգութեան և կրօնի հորիզոնից բոլորովին աննշմարելի և դուցէ շատ բնական կերպով: Սորա ապացոյց օրինակները բազմաթիւ են, որոնք ներկայացնելը բնաւ մեր զիտաւորութիւնը չէ: Մեր ասածները «Уезуиты въ россіи», անունով դրքի պատճառաւ է, որ նորերումս լոյս տեսաւ Պետերբուրգի մէջ: Վաղէնք այդ դրքից թարգմանելով այն՝ ինչ որ վերաբերում է Զիզուիթների գործունեութեանը Ռուսաստանի Հայերի մէջ: Ճիզուիթներն, ինչպէս ընթերցողը կ'տեսնէ հետեւեալ քաղուածից, սկսել են իրանց գործը Ռուսաստանի Հայերի մէջ՝ Եշտերխանում, Կրիմում, և Սոդդոկում: Ե.յդ դրքի մէջ հետեւեալ կերպով է սրտամում Հայերի մասին. «1720 թուին Վապուցին Հ. Ենտոնը (թերեւս Հայ) Պարսկաստանի և Ղովկասի գաղթականների հետ միասին անցաւ Հաշտարխան և Վօլինսկի նահանգապետի թոյլատրութեամբ Հայոց թաղում կանգնեց մի

փայտակերտ եկեղեցի «Пята веркинъ», Мария, անունով: Ե.յդ եկեղեցւոյ շառաջին անգամներն եղան Հայերը, որոնք ընդունել էին Հ. Ենտոնի քարոզութեամբ Վաթիկուլութիւն (Վատինականութիւն): Հոգովականների (Վաթիկուլներ) առաքինութիւնը Հայերի մէջ շատ յաջող էր գնում: Հայոց Ստեփաննոս Ապիսկոպոսը այս մասին հաղորդեց Հաշտերխանու Ռուսաց Արքեպիսկոպոսին՝ թէ Վապուցիները սկսել էին որսալ ոչ միայն Հայերին, այլ և ուղղափառների (Ռուսաց), և սորա հետ միասին Հայոց Ապիսկոպոսը ինչպէս առաջարկել է նորան Վատինացած Հայերի ցուցակը: Ժ.Վ.Րդ. զարի սկիզբը Հաշտերխանի Վապուցիների համար շատ ցաւալի և նշանաւոր ժամանակ էր: Հաշտերխանի վաճառական Հայ - կաթողիկոսն Վարատովից՝ Արիփչի - Արվիօրօս էին ծանապարհորդում և նրանց այս ծանապարհորդութիւնը յարմարին միջոց էր ճիզուիթների համար (որոնք Վարատովում են եղել): Սոքա (Ճիզուիթներն) սկսեցին անմիջական հաղորդակցութիւն ունենալ Հաշտերխանի Հայերի հետ, և աւելի հաստատուն բարեկամութիւն վարել նրանց հետ: Հետեւաբար Հայերը խնդրեցին որ իրանց հօլեորականների փոխարէն Ճիզուիթները լինին, որոնք միևնոյն ժամանակ ստացան իրաւունք հոգւելու Հաշտերխանի ծխական եկեղեցին: Ե.յս Ճիզուիթներն իրանց բնակարանի մէջ բացին մի ազնուականների Պանսիօն կամ Ճեմարան երկու դասասանից բազկացած, որտեղ իրանք Ճիզուիթներն էին ուսուցանում՝ Վա

,,յեղադրութիւն, 'Կարչութիւն, Արբ.
 ,,պատմութիւն, Վրիստոն. վարդապե-
 ,,տութիւն, ընդհանուր պատմութիւն,
 ,,Ռուսաց պատմութիւն, Թուարանու-
 ,,թիւն, Երկրաչափութիւն, Ռուսերէն,
 ,,Վաղղիներէն, Վերմաններէն և Նաւի-
 ,,ններէն: Ե.յդ պնուականների Պանսիօ-
 ,,նից զատ՝ Ն'իզուիթները քացին եկեղե-
 ,,ցւոյ մօտ մի վարժատուն նոյնպէս երկու
 ,,դասաանից բաղկացած, որտեղ սովորեց-
 ,,նում էին Հայերէն: Բնականների
 ,,Պանսիօնի աշակերտների թիւը 10-ից
 ,,աւելի չէր պատահում, իսկ վարժատու-
 ,,ներ 30-ից աւել էր լինում: Ն'իզուիթ-
 ,,ներն իրանց խորամանկութեամբ աշխա-
 ,,տում էին գրաւել ծնողաց, և նոքա ար-
 ,,դարեւ գրաւում էին ոչ միայն Հայերին
 ,,կամ միւս օտար ազգերին, այլ և Ռուս-
 ,,ներին: Ն'իզուիթներն (ասում է Հեղե-
 ,,նակը) Հաշտերիսանցի Հայերի կեանքի
 ,,պարզութիւնը շփոթեցին, նորա մէջ
 ,,մտցրին հակառակասիրութիւն, գեր-
 ,,դաստանների մէջ խորութիւն, զանա-
 ,,զան անբաւականութիւններ և վատ օ-
 ,,րինակներ: " (Տես մասն Բ. երես 278—
 ,,279): Խրիմի վերաբերութեամբ ասում
 է նոյն հեղինակը, "Ն'իզուիթներն Խրիմ
 ,,մօտան 1706 թուականներից. Հայոց
 ,,Նշխիկոպոսը թոյլ տուեց նրանց ժա-
 ,,մերգութիւն անել Հայոց եկեղեցում.
 ,,Ն'իզուիթների քարոզութիւնը շատ յա-
 ,,ջող էր գնում, որովհետեւ Բաղչեսարա-
 ,,յում արդէն 80 Հայ ընդունեցին Պա-
 ,,թիզիկութիւն, " Միտեղում էլ ասում
 ,,է թիզայի Ն'իզուիթական միաբանու-
 ,,թեան վանահայր Աոննսը աշխատում
 ,,էր տեղաւորցնել Ն'իզուիթներին Մոզ-

,,իդուում: 1808 թուին մենք տեսնում
 ,,ենք Ն'իզուիթներին Մոզդուկում երեք
 ,,անդամներից բաղկացած, :

Ե.յսպէս ահա մեր աղանաբարոյ ան-
 հեռատես Հայերը աննշմարելի կ'ըսով՝
 կուրօրէն յափշտակուած գայլազգեստ ոչ-
 խարների խաբուսիկ խոստումներից և ար-
 տաքին շքից՝ ընկնում էին նրանց թա-
 կարդը: 'Նոքա՝ յայանի բան է՝ դրանում
 ոչ մի վատութիւն չէին նկատում, ոչ մի
 թշնամութեան կամ խաբեքայութեան
 կասկած չունէին նրանց վերայ. ընդ հա-
 կառակն՝ ինչպէս վերին յիշեցինք, մի-
 միայն իրանց վերայ դառնելով և ձանաչե-
 լով զործի լուութիւնը յարտաքուստ՝
 առանց աջուձախ մտիկ տալու դիմում էին
 լիանալու ուսման աղբիւրներից, եթէ հա-
 ցի տեղ քար ևս տային նրանց (ինչպէս
 որ իրօք պատահում էր), նոքա միևնոյն
 պատրաստականութեամբ և եռանդով
 ընդունում էին: Հայն երբեք չէր մտա-
 ծում, որ իր ժամանակաւոր խաղ ու պա-
 րը պէտք է երբեմն իր որդւոց համար լաց
 քւ թաց պատրաստէ. նա չէր հաւատում,
 որ այդպիսի պղտոր աղբիւրներից ստա-
 ցած ուսումը կարող է հալել ու մաշել
 Հայի բարոյական ույժը: Ե.յդ էր որ՝ այն
 ազգը—որ երբեմն իրրեւ քաղաքական կեն-
 դանի և նշանաւոր ազգ միլիոնաւոր ժո-
 դովրդի անունով էր հռչակուած՝ այսօր
 հազիւ հազ չորս միլիոն ժողովրդի ու-
 բուական թիւը կտեսնէ միայն անուամբ:
 Արդե՞ք մեր հաճկարնակ ազգայնոց մէջ
 մինչ ցարդ չ'է թաղաւորում այդ խարու-
 սիկ ու խորդացնող ժանտախտը: Արդե՞ք
 Հայ - Պաթիզիկ, Հայ - Նուաւրական էլն.
 անունները Հայութիւնից խորդացնող և

դէպի այլ ազգութիւն որսացող անուէններ չեն անհեռատեսութիւնից և անտարբերութիւնից առ մայրենի կրօնն ու լեզուն հետեցած: Հարկաւոր է յիշել մեր Շամախեցի ազգայնոց վիճակը և աչքից թողուլ մի այդպիսի կենդանի օրինակ. այս տեղ ափի բերան կըսէ ամեն ճշմարիտ Հայ: Թողնե՛ք միւսները, Պօլսոյ միջի Վաղդիական Վիցէյը մօտելու աւելի պատրաստական մասն Հայերից է բաղկանում՝ թէև այն տեղ Հայոց լեզուի և Հայոց կրօնի ուսումնն չկայ բոլորովին. և զարմանք չէ ուրեմն որ մեր Պօլսոյ ազգայինք կամ Հայոց Մէն. Պատրիարքը և ազգային վարչութիւնը այսպէս տառն են նայում այդ հարցին, մանաւանդ կրօնի վերայ: Արօնն եմ՝ ասում, որ բաց ի այն՝ որ կրօն է և մարդուս հոգեկան կարեաց առաջինն է, այլ և մեր ազգութեան առաջին և վերջին միակ կապն ու պահապանն է մեր լեզուի հետ այս դարեւոր ժամանակներից հետ: Եւ նրա կարծում եւք որ մեր Տաճկաբնակ ազգայինք մեր ազգութեան մեծաթիւ մաս գոյով և ունենալով յարմարաւոր պայմաններ, աւելի եռանդով պիտի դիմեն ազգային կրթութիւնը իրանց պիտեւրով սեփականելու. թէև ինչպէս լրերը ցոյց են տալիս փորձերի հետ միասին, նոքա միւսնոյն տեսակ յափշտակուած փափագներով ու ցանկութիւններով փոխանակ այդ անելու՝ աւելի աշխատում են օտարից գտնել իրանց ուղածը: Եւս բանին ապացոյց կարող է լինել ի թիւս այլոց նոյն խի Պօլսոյ Վաղդիական Վիցէյը և այլ մասնաւոր օտար դպրոցներ՝ որոնք նոյնպէս զուրկ չեն Հայերի գթասրտութիւնից, թէպէտ նրանցում բաց ի Վաղդիականը

կամ առհասարակ օտարինը՝ — ազգային ոչինչ չկայ: Պօլսոյ կամ առհասարակ Տաճկաստանի Հայ եղբարց ընթացքը մեղադրել աւելորդ է, ի հարկէ քան ի որ նոքա ազգային վարչութեան շնորհիւ հետզհետէ կճանաչեն մեր այժմեան ազգութեան վիճակն ու կարիքը. յուսալի է որ այդ նորաձեւութեանց և առհասարակ սնուծի և խարուսիկ նորասիրութեան (Ելաթրանկայ) ցեցը նրանց մէջ չունենայ աւելի օրինաւոր և՛ ինչպէս կարծուում է, Լուրդական զարգացման նշանակութիւն, և մեր սիրելի Պօլսեցի եղբարք խելքերը զուխներն ժողոված՝ արդէն կմտածեն և կզգան մեր ժողովրդական այժմու կարօտութիւնը մանաւանդ զաւառներում: Աւր մնայ որ նոքա ունին նիւթական կարողութիւն և մանաւանդ իրաւունք սեփական ուսումնաւորաններով ամեն չարեաց դէմն առնել: Ուրեմն Տաճկաստանցի Հայ եղբարք մանաւանդ նրանց վաստակաւոր Եռաջնորդներն թող յիշեն սրբազան առաքեալի խօսքը՝ «Ոչ միայն լսելիք են արդարացեալք, այլ պահելիք և առնելիք»:

Ուստաստանի Հայերի մտաւոր զարգացման վերայ մի զաղափար տալու համար քաղենք կարճաօտ տեղեկութիւն Պովկասեան արքունի ուսումնարանների հոգաբարձուի տարեկան հաշուից: Եկներեւ փորձերն ու իրողութիւնքը և Պ. Հոգաբարձուի հաղորդած մի քանի տեղեկութիւնքը (որոնք առհասարակ Պովկասեան արքունի ուսումնարանների աշակերտելոց մասին են և ի թիւս այլոց վերաբերում են մեր Հայ երիտասարդութեանը ևս,) ակամայ կամօք մտաբերել են ապրիս մեզ, սիրելի ընթերցող, Վազար Փար-

պեցւոյ հետեւեալ խօսքերը, որոնք թէպէտ և՛ ըզ դարի Հայ երիտասարդութեան վիճակն ներկայացնելու համար են առաջ, բայց Վիճակ դարի համար ևս կարելի է ասել, ի՞նչ իրողութեամբ էր այն Հայ երիտասարդների բազմաշխատ գործառնութեամբ, որոնք ասում է Վազար Փարպեցին մեծաքանակ, ծախսերով, հեռագրաց ճանապարհորդութիւններով և երկարամեայ ուսումնառութեամբ մաշուում էին Ասորոյ դպրոցներում, և Այս նկարագիրը շատ պարզ ապացոյց է մեր Հայերի եռանդոտ ուսումնասիրութիւնը ցոյց տալու համար, հիմայ էլ մի կենդանի տխուր պատկերն ենք տեսնում, բայց ոչ մի կենդանի միջոցառական արդարութիւն. մեր պիտան Նորարդոյցը երիտասարդութեան երկարամեայ ճիգն ու ներդրութիւնը օտարութեան և նիւթական կարօտութեան մէջ, նորա անձնամաշող աշխատակրութիւնը, ծաղկաթիթիթ օրերի զոհաբերութիւնը ի սերունդան՝ ամենքին էլ զմայլեցնում են արդարեւ, բայց ի պղծ, ո՞ր դիմէ քանի քանի բարոյական զոհեր ևս նուիրում են անակնուկներ զէպքերին, թէև այդքան նահատակութիւններից յետոյ մեր երիտասարդութեան վերջը — ցաւ է յիշել՝ այլոց սանձարձակ կամապաշտութեան կամ երախտագործութեանն է մնում ապաստան: Ահա առիկ Վազար Փարպեցւոյ նկարագրութիւնից մենք կարող ենք կշռել առհասարակ մեր նախնի և պիտան Հայերի արժանաւորութիւնը ուսումնասիրութեան ապարիզում, մինչև մեր սուրբ թարգմանիչը և նոցա աշակերտք ճշմարիտ սիրով առանց

Հահապիւրական նպատակների և սնտիփառական դրութեան մարտիրոսավայել ներդրութիւններ էին կրում ուսումնառութեան և ուսումնառութեան տարածելու համար ի փառս Ասորոյ և ի մշտնջենաւոր բարօրութիւն ազգի, մենք պիտան Հայերս մեծ մասամբ մի կենդանի գաղափարաւոր ներդրութիւնքն ու զրկողութիւնքը կրում ենք անտրտունջ մի վկայական կամ աստիճան ստանալու կողմից սնտապաշտութեամբ, և փոխանակ մարդկային զեղեցիկ արժանաւորութիւնքը մեր ազգի փառանդի վիճակին նպաստաւոր անելու, մենք երբեք անուսումնառ, երբեք թերութեամբ աւելի յարգի ենք համարում անցնել մեր կեանքը զիւանաստանց մէջ առանց մի օրինաւոր կրթութեան և արդիւնքի, առանց մի որոշեալ նպատակի և ուղղութեան: Այսպէսով ահա առիկ, ինչպէս տեսնում ենք Հոգաբարձուի հաշիւից և զիտեք փորձով, ի թիւս այլոց, մեր Հայերն ևս թողնելով համալսարանական կամ այլ բարձր ուսումնառանները հետեւում են մի աննշան ծառայութեան մասնէ և անցնել իրանց կեանքը առանց արդիւնքի և օրինաւոր կրթութեան, իսկ համալսարան գնացող Հայերը արդարեւ մեծ մասամբ վկայականի (Տիպլոմի) հրապոյթքով են շարժում, թէև այն տեղից աւարտելուց յետոյ նոյնպէս երեսի վերայ ընկած են մնում առանց արժանաւոր գործունէութեան, այս խօսքերս հաստատում են նրանով որ մինչ ցայժմ այսքան ուսանողներից և համալսարանում աւարտողներից ոչ մի Հայ ուսումնական չենք տեսնել և չունինք: Ահա իսկ լաւ կլինէր քան չդնայ և զիւանաստաներում փակցնել ի-

րանց կեանքը, ընտրել վարժապետական մաս, կամ միթէ մեր Հայերի համարացի ուսուցչութիւնը կամ սակաւարդին գրադրութիւնը՝ քահանայ դասնալը մի պակասաւճիւր զործ է կամ միւսներից ստճիւր մեր կարծիքով շատերն աւարտելուց յետոյ մի քանի ժամանակ պատրաստուելով հոգեւորականութեան՝ շատ աւելի պատուաւոր և արդիւնաւոր ապալայ կունենային—հակառակ սխալ կարծիքների, և մեր քահանայական և առհասարակ հոգեւորական դասու զարգացման աստիճանն էլ բարձրանալով մեր տգէտ քահանաների թիւը պակաս կը լինէր:

Յիշեալ Հոգաբարձուն ասում է, որ ըրր կովկասեան ուսումնարանները լիքն են աշակերտներով և բոլորն էլ եռանդով, շարունակում են կրթութեան գործը: Այդ հանրապէս Աովկասու վարժարանները լիքն են աշակերտներով, այնպէս որ երբեմն հարկաւոր է լինում չք: զույնն աշակերտներին, (Այս տեղեկութիւնները շատ ուրախալի են ընդհանրապէս Աովկասցւոց վերաբերութեամբ, բայց ցաւալին այս է, որ տեղացիք առհասարակ չեն մտածում իրանց զլեւու վերայ և փոխանակ Բարեխնամ Տէրութեան հոգսերը թեթեւցնելու ու օժանդակելու: Այս խօսքերը հաստատվում են Պ. Հոգաբարձուի հետեւեալ խորհրդածութեամբ: «Արիտասարդների իրաւաբանական մասն զիմելու պատճառն է մեծ մասով ոչ թէ նրանց հակումն զէպ ի այդ ասպարէզը, այլ մի հասարակ հաշիւ՝ որքան կարելի է շուտով ու հեշտութեամբ ձեռք բերել համարարանական վկայականը (Տիպլում), որը ծանապարհ է տալիս նրանց ազատօ-

րէն մանկ քաղաքական ծառայութեան բոլոր մասեր, մի քանիսը նշանակվում են իրրեւ ծառայող սպասելով բաց տեղի: Աովկասու չորս վարժարաններում 85 աւարտողներից 10-ն ուղարկուել են արքունի հաշուով համալսարան կամ բարձր ուսումնարաններ, 20-ն իրանց հաշուով են ուսանում այդ բարձր ուսումնարաններում, իսկ մնացածները (50ը) զուցէ տեղաւորուել են զմնագան զիւանառաներում, չհայելով որ հոգաբարձուն հրաւիրում է առհասարակ աւարտողներին նուիրել իրանց վարժապետական պաշտօնի, որը տալիս է նրանց չափաւոր սոճիկ և թոշակ:

Ահա տալիս աւելորդ ծանրութիւն են պատճառում. թողնէք միւս Աովկասեան աղգերը, —մեր Հայերը կարծենք կարող են այս բանին օժանդակելու յանձն առնելով գոնէ երեխայից նախակրթական մասն իրանց վերայ, մանաւանդ որ զիմնագիւններում և պրօգրիմագիւններում (զիմնագիւն — եօթն դասատուն ունի, իսկ պրօգրիմագիւն — չորս) մեծաթիւ ուշակերտք պատահում են ստորին դասատուներում, այլ ոչ վերին, ուստի և մեծ դժուարութիւն է յառաջ գալիս ընդունելու ժամանակ: Այս գործը մերոնց համար դժուար է, եթէ հետեւին իսկապէս իրանց մի քանի զպրօցների վեճակը բարւոքելու սկզբնական կրթութեան մասով. այդպիսով նորա տէրութեանը թեթեւութիւն պատճառելով՝ միւսնոյն ժամանակ մեծ ծառայութիւն կմատուցանեն ազլի մատուր յառաջադիմութեանը. յայտնի է որ Տէրութեան ուսումնարանների մէջ դասախօսութիւնը Պուլսաց լիզուով է,

ուստի և մանուկներին համար մեծ դժուարութիւն է և միանգամայն փնաս անծանօթ լեզուով սկսել ուսումը. ըստորում նախ որ՝ նա այդպիսով զիտութիւնից և ուսումից զուրկ կմնայ, և երկրորդ որ անգիր անելով օտար լեզուի բառեր՝ կրթանայ նորա միտքը. վասն որոյ կարեւոր է համարուում նախ մայրենի լեզուի միջոցաւ զարգացնել երեխայի միտքը և պատրաստել նորան այնպէս՝ որ նա կարողանայ հեշտութեամբ ըմբռնել ընդհանուր ուսումնարանների այս կամ այն ուսման մասունքը, ինչպէս այդ ձեռով ընթանում են այժմ Բրուսիոյ ուսումնարաններն ևս նորա օտարալեզու հպատակների համար:

Արվկասեան արքունի ուսումնարաններում ուսում առնող Հայերի թիւը Պ. Հոգաբարձուի որոշմամբ հետեւեալն է: Վարժարաններում և նախակրթարաններում, Ուսանողից յետոյ աշակերտների մեծ մասը Հայերից է բաղկանում (500ի չափ), գաւառական ուսումնարաններում մեծ մասն առհասարակ Հայերն են: *):

Եյսպէս ուրեմն Արվկասեան ուսումնարանների Պ. Հոգաբարձուի արժանահաւատ վկայութիւնից տեսնում են՝ որ մեր Հայերը շատ սիրով և մեծ թուով ուսանում են Տէրութեան ուսումնարաններում. եթէ վեր առնենք Մոսքուայի

Լազարեան Ղ'եմարանի և մասնաւոր ուսումնարանների Հայ աշակերտների թիւը որ մինչ 150ի կհասնի, տէրութեան զինուորական կամ քաղաքական ուրիշ ուսումնարանների Հայ աշակերտները, որ թերեւ 50 ից աւել լինի, նմանապէս Պետերբուրգու, Մոսքուայի, և Վորպառի համալսարանների և այն բարձր ուսումնարանների ուսանողաց թիւը՝ որ 150 ից աւել կարող է լինել, եթէ աւում եմ վեր առնենք այս բոլոր կրթուող Հայ աշակերտելոց թիւը հոգաբարձուի ներկայացրած թուի հետ միասին, տեսնում ենք որ 1795 Հայ միայն Հայոց դաւանութեան՝ Տէրութեան ուսումնարաններում կրթուում են մեծ մասամբ իրանց օրական ապրուստը ապահովելու համար ի հարկէ: Բայց այդ թուի հետ պէտք է դումարել և մեր ազգային ծխական և հոգեւոր դպրոցների աշակերտների թիւը, որ զուցէ դորա կրկնապատիկից աւել լինի:

Խօսքս վերջացնելու ժամանակ միանգամ ևս հրաւիրում եմ ընթերցողին ուշադրութիւն դարձնել վերեն ներկայացրած մի քանի մտածմունքների վերայ մեր ընդհանուր Հայերի նկատմամբ: "Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ":

ԾԻՒԼԿԵՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԵՆՆԵՐ

Ե.

(*) Պ. Հոգաբարձուն այս որոշելու ժամանակ ի նկատի է ունեցել ընդհանուր թիւը վարժարաններում և նախակրթարաններում, բայց եթէ վեր առնենք այն տեղերի Գիմնազիէքն ու Պրօգիմնազիէքն, որտեղ Հայ ժողովուրդը շատ է, այն ժամանակ կտեսնենք որ նրանցում մեծ մասը Հայերն են, յետոյ Ուսանելն ևլն:

Երբ արտի շրջաբերականիցը մի ներքին ուրախութեամբ տեղեկանում ենք Հայերի զանազան տեղերում արած ջանքին և զործին-իւրեանց որդւոյ՝ (թէ աղջկե-